



190. ԿԱՔԱՎԸ ԵՎ ԱՂՎԵՍԸ

Մի անգամ աղվեսը տեսնում է մի կաքավի, որ թառած քարին թևի տակն է կտցում, ասում է.—Կաքավ քույրիկ, էն օրը մեզ մոտ մեծ ժողով էր, բոլոր կենդանիներից էլ կային, բոլորը միաբերան ասացին, որ կաքավը շատ լավ շորորալ ու հրզել գիտե, դե մի շորորա, տեսնեմ ճի՞շտ են ասում:

Կաքավն սկսեց շորորալ կանաչ խոտերի վրա, այդ ժամանակ աղվեսը հաճ արավ ու բռնեց կաքավին: Կաքավն աղվեսի բերանից այսպես խոսեց.—Եղբայր աղվես, էն օրը մեր բոլոր թռչունների մոտ մեծ ժողով էր, բոլորը միաբերան ասացին, որ աղվեսը շատ աստվածապաշտ և աղոթասեր է, ճաշից առաջ նախ աղոթում է աստծուն, որ իրեն ճաշ է տվել, որպես շնորհակալություն, հետո ուտում, մի աղոթիր տեսնամ ճի՞շտ են ասում:

Աղվեսը բերանը բաց արավ, որ աղոթի, կաքավը թռավ: Աղվեսը դառնացած վնգստաց ու կաղկանձնիով ասաց.—Ախր ո՞վ ասաց ուտելուց առաջ շնորհակալություն հայտնիր, նախ կեր, հետո աղոթիր կամ շնորհակալություն ասա:

